

քած սրբազրութիւնը, որոնք որ է փոփոխութիւն եթէ յառաջ կը բերեն, իմ աշխատութեանս վարկին ու պարզած գաղափարներուս հաստատութեան մէջ չէ անշուշտ. թէպէտ ինք աղով համարեցաւ 165 տպագրական սիւներու վրայ հիմնած «դոլդոլուն շինուածս դիւրակործան» հիմն ի վեր տապալել ու դատապարտել, որպէս զի «վստահացնէ» պատմական յայտնութիւններէս «տարակուսեալ մտքերն ու վիճաւորեալ սրտերը»։ Գովելի է արդարեւ

Պատ. Հոր այդ հոգեկեցոյց նախանձը. որոյ բարոյական արդիւնքն եթէ կրնայ վիճելի լինել, սակայն կը կարծեմ՝ թէ անբաւական է լուծելու բանասիրական ու պատմական հարցերը, որոնք փոխանակ նախանձայուզութեան՝ կը պահանջեն անայլալուծութիւն, տքնութիւն և քրտինք, առանց որոց՝ աշխատուած հատորէ մը քննադատելի քանի մը կէտեր որսալու գիւրին յաջողութիւնն անգամ անապահով կը դառնայ։

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՎԵՆԵՏԻԿԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

Այս տարի Պալիդոյի (պատանիներու մարզական պետական ընկերակցութիւն) վարչութիւնը ողիմպիական մը կազմակերպեց Վենետիկի միջնախարգ և միւս դպրոցներու աշակերտներու համար, որ տեղի ունեցաւ մայիս 16 և 17 օրերուն փաղքիս մարզադաշտին մէջ։ Մուրատ-Ռափայէլեան վարժարանն ալ մասնակցեցաւ այդ ողիմպիականին երեք խումբերով (ամէն խումբ կազմուած էր տասնեութ հոգիէ)։ Մրցումները կը կայանային հաւաքական, այսինքն իւրաքանչիւր խումբէ կառարուած, և անհատական մարզական փորձերու մէջ. առաջին հանդիսացող հրեք դպրոցներուն պիտի վիճակուէին երեք զլիաւոր վարժատրութիւններ. իսկ խումբերուն ալ առանձին մրցանակներ։ Մուրատ Ռափայէլեան վարժարանը առաջին հանդիսացաւ միջնախարգ դպրոցներու մէջ և արժանացաւ ոսկիէ շքանշանին, իսկ երեք խումբերն ալ ստացան առաջին մրցանակները, որ է մէկմէկ դափնէպսակ, հաւաքական մարզանքին մէջ երջ տուած յաջողութեան համար։ Անհատական մարզափորձերուն մէջ ալ վարժարանիս աշակերտներն շատեր բարձր մրցանիշներ շահեցան։ ՊՊ. Ղ. Աճէմեան և Ա. Սը-

զրեան գունտ նետելուն մէջ առաջին ելան, իսկ Պ. Արսէն իբեքճեանն նիզակ նետելուն մէջ։ Բարձրութիւն ցատքելուն մէջ Պ. Յովհաննէս Երամեան առաջին հանդիսացաւ, իսկ Պ. Վ. Ջըննոզեան երկարութիւն ցատքելուն մէջ երրորդ. խառն ոստումին մէջ առաջին հանդիսացաւ Պ. Պետրոս Թազիճեան, իսկ ծողով ցատքելուն մէջ Պ. Ն. Ոսկեան. 80 մեդրի վազքին մէջ բարձր մրցանիշներ առին ՊՊ. Յակոբ Գազանճեան, Վ. Սրապեան և Ա. Կիւլէտէրեան։

Այսպէս Մ. Ռափայէլեան վարժարանը օտար երկրի մէջ և տեղական բազմաթիւ աշակերտութեան մէջ (հրեք հազար մարզիկներ ներկայացած էին) իր երեք խումբերով միայն, մինչ ուրիշ դպրոցներ եօթն և աւելի ալ խումբեր կրցած էին տրամադրել, կրցաւ անոնցմէ խել առաջնութիւնը թէ՛ ընդհանուրին և թէ մասնական խաղերու մէջ. նշան է ասիկա այն բարձր կրթութեան նոյն իսկ մարզական մասին մէջ, որ կ'աւանդուի այդ Հաստատութեան մէջ և միանգամայն աշակերտներու նախանձայոյզ եռանդին պահելու անաղարտ և կանգուն պատիւը ազգային զգացման և վարժարանին։

